«Հաստատում եմ»՝ _____

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի

ռեկտոր Ե. Սերոբյան

«18» ապրիլի 2026թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Ամալյա Գրիշայի Սահակյանի «Կրտսեր դպրոցականի ստեղծագործական կարողությունների զարգացումը նորագույն մանկավարժական տեխնոլոգիաների կիրառմամբ» վերնագրով, ԺԳ.00.01 թվանիշով «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ:

Ժամանակակից հասարակության զարգացման պայմաններում կրթական համակարգի առջև դրված են նոր պահանջներ, որոնք պայմանավորված են գիտատեխնիկական առաջընթացով, տեղեկատվական հոսքերի աճով և ստեղծագործական մտածողություն ունեցող անհատի ձևավորման անհրաժեշտությամբ: 21-րդ դարը բնութագրվում է որպես ստեղծարարության և նորարարության դարաշրջան, որտեղ առաջնային է դառնում ոչ միայն գիտելիքների փոխանցումը, այլև սովորողների ստեղծագործական ներուժի բացահայտումն ու զարգացումը:

Կրտսեր դպրոցական տարիքը առանձնահատուկ նշանակություն ունի անձի ձևավորման գործընթացում, քանի որ հենց այս փուլում են դրվում ճանաչողական հետաքրքրությունների, երևակայության, ինքնուրույն մտածողության և ստեղծագործական գործունեության հիմքերը: Սակայն ավանդական ուսուցման մեթոդները հաճախ չեն ապահովում սովորողների ստեղծագործական ակտիվության լիարժեք զարգացում, ինչը հանգեցնում է ուսումնական գործընթացի մեխանիկականացման և մոտիվացիայի նվազման: Այս համատեքստում

առանձնահատուկ կարևորություն է ստանում նորագույն մանկավարժական տեխնոլոգիաների կիրառումը, որոնք ներառում են ինտերակտիվ մեթոդներ, թվային գործիքներ, նախագծային ուսուցում, խաղային տեխնոլոգիաներ և համագործակցային ուսուցման մոդելներ: Այս տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս ստեղծել սովորողի ակտիվ մասնակցության, ինքնադրսևորման և ստեղծագործական մտածողության զարգացման համար բարենպաստ կրթական միջավայր:

Միևնույն ժամանակ, առկա է հակասություն՝ մի կողմից՝ ստեղծագործական կարողությունների զարգացման նկատմամբ հասարակության աճող պահանջի, և մյուս կողմից՝ դպրոցներում այդ գործընթացի իրականացման համար մեթոդական ապահովման և տեխնոլոգիական կիրառման սահմանափակ հնարավորությունների միջև: Այս հակասությունը պայմանավորում է հետազոտության արդիականությունը:
Ուստի, կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացմանը միտված նորագույն մանկավարժական տեխնոլոգիաների արդյունավետ կիրառման տեսական և գործնական հիմնավորումը հանդիսանում է արդիական և կարևոր գիտական խնդիր:

Ընդհանուր առմամբ, ներածությունը գիտական առումով ամբողջական է և համակարգված, ներկայացված են հետազոտության գիտական հիմքը, հետազոտական ապարատի բաղադրիչները:

Ատենախոսության առաջին՝ <<Կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման հիմնախնդրի գիտատեսական հիմնավորումը>> գլխի առաջին ենթագլխում ներկայացվում է անձի ստեղծագործական կարողությունների զարգացման հիմնախնդրի դիտարկումը փիլիսոփայական, հոգեբանական և մանկավարժական հետազոտություններում, բացատրվում է <<ստեղծագործական կարողություններ>> հասկացության էությունը:

Ատենախոսության առաջին ենթագլուխը ունի կարևոր տեսա-մեթոդաբանական նշանակություն, քանի որ այն նվիրված է անձի ստեղծագործական կարողությունների զարգացման հիմնախնդրի բազմակողմանի վերլուծությանը՝ փիլիսոփայական, հոգեբանական և մանկավարժական մոտեցումների շրջանակում:
Հատկապես՝ արժևորվում է «ստեղծագործական կարողություններ» հասկացության էության հստակեցումը, հասկացության բազմակողմանի մեկնաբանությունը, ինչը

նպաստում է հետագա հետազոտության տեսական հիմքի ամրապնդմանը: Ենթագլխի կարևոր ձեռքբերումներից է նաև տարբեր մոտեցումների համադրումն ու վերլուծությունը, տարբեր սկզբունքների ներկայացումը, որը թույլ է տալիս ոչ միայն ամփոփել առկա տեսությունները, ձևավորել հետազոտության սեփական հայեցակարգային դիրքորոշումը: Սա ապահովում է աշխատանքի գիտական ամբողջականությունն ու տրամաբանական հաջորդականությունը: Միևնույն ժամանակ, ենթագլուխը հիմք է ստեղծում հետագա գործնական ուսումնասիրությունների համար՝ ապահովելով ստեղծագործական կարողությունների զարգացման մեթոդական ուղենիշների ձևավորման անհրաժեշտ տեսական հենքը:

Երկրորդ՝ «Կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման վրա ազդող գործոնները» ենթագլխի գաղափարական առանցքն այն է, որ ստեղծագործական կարողությունների զարգացման վրա ազդող գործոններից են համամարդկային հոգևոր և բարոյական արժեքները, կրտսեր դպրոցականների կազմաբանական, հոգեբանական, սոցիալ-անձնային, խոսքային և ստեղծագործական գործունեության առանձնահատկությունները, որոնք դիտարկվող գործընթացում էական դեր ունեն:

Երրորդ ենթագլխում՝ հեղինակի կողմից ներկայացվում և մեկնաբանվում են կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների արդյունավետ զարգացման առաջադրված նորագույն տեխնոլոգիաների, փոխներգործուն մեթոդների, առաջադրանքների մանկավարժական պայմանների բնութագրերը: Երրորդ ենթագլուխը առանձնանում է իր կիրառական ուղղվածությամբ և գիտագործնական արժեքով, քանի որ հեղինակը հիմնավորված կերպով ներկայացնում է կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացմանը միտված նորագույն տեխնոլոգիաները և փոխներգործուն մեթոդները: Արժևորվում է նաև մանկավարժական պայմանների հստակ բնութագրումը, որը հնարավորություն է տալիս արդյունավետորեն կազմակերպել ուսուցման գործընթացը և ապահովել սովորողների ստեղծագործական ակտիվության զարգացումը: Ենթագլուխը կարևոր հիմք է հանդիսանում առաջարկվող մոտեցումների գործնական կիրառման համար:

Ատենախոսության երկրորդ՝ «Կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման մանկավարժական տեխնոլոգիաների

արդյունավետության հիմնավորմանն ուղղված հետազոտության արդյունքների վերլուծությունը», գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլուխը, որի վերնագիրն է «Առաջարկվող նորագույն տեխնոլոգիաների, փոխներգործուն մեթոդների, ստեղծագործական առաջադրանքների և մանկավարժական պայմանների արդյունավետության հիմնավորումը>>, կարևոր տեղ է զբաղեցնում աշխատանքի կառուցվածքում՝ ապահովելով տեսության և պրակտիկայի տրամաբանական կապը: Հեղինակը ոչ միայն ներկայացնում է կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման ուղիները, այլև կատարում է դրանց վերլուծական մեկնաբանություն՝ ընդգծելով կիրառվող մեթոդների արդյունավետության պայմաններն ու սահմանները:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում, որի վերնագիրն է <<Հետազոտության ընթացքում կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման մակարդակների հայտորոշումը (դիագնոստիկան)>> ներկայացված են հետազոտական աշխատանքների կազմակերպման և իրականացման փուլերը, կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման մակարդակները որոշող հիմնական չափանիշները, հիմք ընդունելով այն, որ ստեղծագործական կարողությունները հիմնականում ձևավորվում և դրսևորվում են ուսումնաստեղծագործական գործունեության ընթացքում: Առանձնացվել են չափանիշներ, որոնք բնորոշում են կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման մակարդակները, տրվում են դրանց բնութագրումները: Այս ենթագլուխն ունի կարևոր մեթոդաբանական արժեք, քանի որ հստակ ներկայացվում են հետազոտության կազմակերպման փուլերը և ստեղծագործական կարողությունների զարգացման մակարդակների հայտորոշման չափանիշները՝ ապահովելով աշխատանքի գիտական հիմնավորվածությունը: Արժևորվում է նաև մակարդակների բնութագրումների տրամաբանական համակարգվածությունը, որը հնարավորություն է տալիս առավել ճշգրիտ գնահատել կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների ձևավորման և դրսևորման աստիճանը:

Աշխատանքի երկրորդ գլխի երրորդ ենթագլխում տրվում է կիրառված մանկավարժական տեխնոլոգիաների և փոխներգործուն մեթոդների արդյունավետության հետազոտական հիմնավորումը: Հետազոտության ընթացքում

առաջադրվել են խնդիրներ, հետազոտությունն իրականացվել է փուլերով, հետազոտության արդյունքներն ակնառու են և արձանագրում են կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման դրական շարժընթաց:

Աշխատանքի գլուխների շուրջ արված են եզրակացություններ, ավատին նույնպես տրվում են եզրակացություններ, որոնք բովանդակում են առաջադրված խնդիրների լուծումներ: Օգտագործված գրականության ցանկը հարուստ է:

Բարձր գնահատելով ատենախոսության գիտական արժեքը, հեղինակի գիտական պատրաստվածությունը՝ նշենք որոշ նկատառումներ աշխատանքի վերաբերյալ.

1. Աշխատանքի 2.1 ենթագլուխը կարող էր ավելի շահել, եթե ընդգրկեր նաև տարբեր մոտեցումների համեմատական գնահատում և փորձարարական արդյունքների ավելի խորքային վերլուծություն, ինչը կուժեղացներ աշխատանքի գիտական հիմնավորվածությունը:

2. Աշխատանքում «նորագույն մանկավարժական տեխնոլոգիաներ» հասկացությունը կարելի էր ավելի կոնկրետացնել, ինչպես նաև մի փոքր ընդարձակ ներկայացնել, որը կօգներ հետազոտության ուղղվածությունն ու շրջանակներն ավելի պարզ ներկայացնել:

3. Աշխատանքի 1.1 ենթագլուխը ատենախոսության մեջ (էջ 2) և սեղմագրում (էջ 7) տարբեր ձևակերպումներ ունեն:

4. Աշխատանքի 2.3 ենթագլխի և սեղմագրում ներկայացված վերնագրերը նույն կերպ ձևակերպված չեն:

Այս նկատառումները բնավ չեն ստվերում պատշաճ, գիտականորեն մշակված հետազոտական աշխատանքի նշանակությունը:

Այս առումով Ամալյա Գրիշայի Սահակյանի «Կրտսեր դպրոցականի ստեղծագործական կարողությունների զարգացումը նորագույն մանկավարժական տեխնոլոգիաների կիրառմամբ» վերնագրով ատենախոսական աշխատանքը կարևոր ներդրում է տարրական մանկավարժության ոլորտում:

Եզրակացություն

«Կրտսեր դպրոցականի ստեղծագործական կարողությունների զարգացումը նորագույն մանկավարժական տեխնոլոգիաների կիրառմամբ» վերնագրով

ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի գիտական աստիճանների շնորհման կարգի 7-րդ կետի պահանջներին և Ամալյա Գրիշայի Սահակյանի արժանի է իր հայցած ԺԳ.00.01 թվանիշով «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Կարծիքը քննարկվել և ընդունվել է «Մանկավարժության» ամբիոնի՝ 2026թ.-ի ապրիլի 13-ի թիվ 13 նիստում:

Նիստին մասնակցել են մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսորներ Ռ. Մարդոյանը, Ա. Մկոյանը, մանկ. գիտ. թեկնածու, դոցենտներ Լ. Ղուկասյանը, Մ. Կարապետյանը, Լ. Հակոբյանը, Ն. Ադամյանը, Լ. Միքաելյանը, Ն. Գրիգորյանը, Ա. Յայլոյանը, մանկ. գիտ. թեկնածուներ Մ. Ղալաչյանը, Ա. Զաղոյանը, Ն. Գալոյանը, դասախոսներ Մ. Խաչատրյանը, Ս. Համբարյանը:

Մանկավարժության ամբիոնի վարիչ,
Մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ՝ Լ. Ղուկասյան

18.04.2026թ.

Մանկավարժության ամբիոնի վարիչ Լ. Ղուկասյանի ստորագրությունը հաստատում եմ:

ՇՊՀ-ի գիտական քարտուղար, կ.գ.թ., դոցենտ՝ Կ. Պետրոսյան